



195. ԹԱԶԻՐԸ ԽՈԽԱՆԱ ՑԱ ՊԻՐՈՒՄ

Մին շատ հարուստ մարթ միշտ կնեգլ ար անում, պիրում մին
օր պահում, էքյսի օրը պեց թողում։ Մին իրփիվերի կնեգլ քյինամ
ա տրա կոշտը, ասում։—Քանի տարե ես մենակ ըմ, ինձ օզե, էտ
մարթը մին մըեծ ընումավուր թաշիր ա ինում, ասում ա.—Հինչ
կինի՞, եթ քեզ օզեմ, տանեմ մըեր տռն։

Թաշիրն էտ կնգանն օղում ա, տանում։ Մին օր պահում ա,
պադրաստվում վրեր էքյսի օրը տռնա քցի։ Ծոավետը վրեր օղում
ա զործի քյինամ, կնեգլը հրցընում ա, թա քըզետե հաց լի շինի՞մ,
վրեր կյաս օտես։ Թաշիրը թա շինի կնեգլը շորվա յա իփում,
նհետը հունց ճար քցում, վրեր թաշիրը սոված կյամ ա էրկու
աման օտում, փորն օչչում ա, սանջու տըեռնում, ըսկըսում ցա-
վելլը։ Վրեր մին խիլլա վայ-վայ ա անում, ասում սանջու վրմ ին-
գյալ, մըեռնում ըմ, կնեգլը թա արխային կաց, տա սանջու լի,
խուխու ցավ ա։ Թաշիրը թա ա կնեգլ, հի՞նչ ըս կյիժ-կյիժ խո-
սում։ Կնեգլը թա՝ լէ՛, վրեր չէ, էտ խուխու ցավ ա, շնու ըզբդ-
վրլական ըս։

Թաշիրը սազ քշերը վայ-վայ ա անում, լուսա մոտե թձկա-
նում, քոնավ հնցընում։ Կնեգլն էլ քյինամ ա հըրըվանեն հառնեն
նոր իլած խոխան պիրում, տինում թաշիրին վըննըզըթերումը։
Թաշիրը զնկթնանում ա, տըեռնում կնեգլը ոքոն իլած», եթ ա

կըթընում, թա էս հինչ պեն ա, կնեղյը թա վա՛յ, քուռանամ ա՛
մարթ, դիլդացալ էլ շըմ, վըեր ըդադվալ ըս, քուռավ ըմ հնցալ,
տու վըել խոխան պերալ ըս, կըրացալ շըմ եր կենամ խոխանավն
ինիմ: Թաշիրը թա՛ լավ, խայտառակ տընոենքյ պըրծներյ, խո-
խան տար հունց տըեղ թաղե, վըեր գյուղող շինի, թա շէ, սաղ
քաղաքումը մին մաննը մզըր կըտեռնամ: Կնեղյը թա՛ լավ, տա-
նեմ հունց տըեղ թաղեմ, վըեր սադանան էլ շի զիդա: Ասում ա
պըրծնում, խոխան տանում տամ հըրվանեն, նորդաբներեն ծեն
տամ, ասում հինչ տըեղավ քյինաք, կասերյ թաշիրը քշերես մին
տղա յա պերուն:

Սառանեն էլ հինչ տըեղավ քյինամ ըն, սրան-նրան ասում
ըն: —Պա ասել շը՞թ, թաշիրն էս քշեր մին տղա յա պերալ: Թա-
շիրը վըեր քյինամ ա քաղաքը, հինչ տեղավ անց ա կենում, լոխ
ասում ըն աշկըտ լուս, սաղ-սըլամաթ ըզդվեցեր, տղա պերեր:
Թաշիրը մնամ ա շիշկիլված: Մին քանի օր վըեր կենում ա, տրան
լավ հըմընլըցընում ըն: Տըեսնում ա, վըեր խայտառակ ա տըեռ-
նում, տոնը-տըեղը թողում ա, կլնին յոր օնում, քյինամ դարիրու-
թուն: Տասնընճնոգյ տարե վըեր դարիրութունում մնամ ա, հայրե-
նիքին կարոտը քաշում ա: Ասում ա դե խոխա պիրիլիս տարեն էլ
մըննըրներան քցան կինին, շատըս քյինացալ ա, մնացալ ա խը-
րեգյըս, քյինամ արեսնամ հայրենիքումըս հինչ կա, հինչ լի կա:

Եր ա կենում պաղրաստվում, հզե ինձնմ: Վըեր տոնս ա կյամ
իրանց շենին տակը, տըեսնում ա էրկու վար անող մարթ եփանց
հողեն սահմանեն հետե կու ըն անում: Մինն ասում ա իմ հողեն
սահմանն ըստեղավ ա, էն մինն էլ թա շէ, ըստեղավ ա: Վըեր
շատ դըլմըղալ ըն անում, էն մինն ասում ա: —Տնաշին, հալա թա-
շիրը խոխա պերած տարեն իմ հողես սահմանն ըստեղավ ա
իլալ, տու հինչ ը՞ս ասում: Թաշիրն էտ խոսկը վըեր ըսկանում ա,
ասում ա, պա՛հ, հալա էտ պենը մտըրներան քցան լըն... տեղատ
ետ ա տըեռնում, նորից քյինամ դարիրութուն:

